ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 29 2 0 2 6 № 1

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ETHNOGRAPHY

ՀՏԴ՝ 39(=19):72:316.7
DOI: 10.52971/18294316-2026.29.1-104

ՋԱՐԴԻ ՁՈՐ. ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ (ՓՈՒԼ I)[1]

Դիանա Վ. Աբրահամյան
Երևանի պետական համալսարան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Սույն աշխատանքում Ջարդի ձորը հանդես է գալիս որպես կոլեկտիվ տրավմա և հավաքական հիշողություն ներկայացնող խորհրդանշական և ֆիզիկական տարածք: Հոդվածի նպատակն է ցույց տալ, թե ինչպես է նյութականացվում սոցիալական հիշողությունը՝ Ջարդի ձորի օրինակով: *Մեթոդներ և նյութեր.* Հոդվածում քննվում է տարածության և սոցիալական հիշողության կապը՝ ներառելով պատմական, տարածական, սոցիալական և մշակութային չափումներ: Հետազոտության ընթացքում հավաքված բանավոր պատմությունների, իրականացված մասնագիտական հարցազրույցների և փաստերի համադրման միջոցով ցույց է տրվում Ջարդի ձորի մշակութայնացման գործընթացը: *Վերլուծություն.* Անմիջապես ճարտարապետի՝ Ռաֆայել Եղոյանի հետ իրականացված հարցազրույցի հիման վրա՝ ամբողջական անդրադարձ է կատարվում 1965 թվականին Ջարդի ձորում 1915 թվականի Մեծ եղեռնի զոհերի հիշատա-

[1] Հետազոտությունը իրականացվել է 2024 թվականի փետրվար-մայիս ամիսներին՝ «Ջարդի ձոր. Տարածք և հիշողություն» մագիստրոսական աշխատանքի շրջանակում: Ջարդի ձորի մշակութայնացման գործընթացը տեղի է ունեցել 3 հիմնական փուլերով, որոնք նշանավորվում են տեղանքում տարբեր տարիներին հուշարձանների կանգնեցմամբ: Հետազոտության ծավալայնության պատճառով, այն ներկայացվում է մասերով: Սույն հոդվածում ներկայացվում է առաջին փուլը:
Հետազոտության շրջանակում աջակցության համար խորին շնորհակալությունն ենք հայտնում Ջարդի ձորում կառուցված աղբյուր-հուշարձանի հեղինակին՝ 1964-1977թթ. Գյումրու գլխավոր ճարտարապետ Ռաֆայել Եղոյանին, ինչպես նաև պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության մասնագետ Ավետիք Մելիք-Սարգսյանին, որը նախկինում ղեկավարել է պատմամշակութային միջավայրի պահպանության Գյումրու մարզային կառույցը, ինչպես նաև բոլոր բանասացներին՝ իրենց հիշողություններով և պատմություններով մասնակից դառնալու համար:

կին նվիրված աղբյուր-հուշարձանի կառուցման պատմությանը: Ջարդի ձորի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները, ընդհանուր առմամբ Արևելյան Հայաստանում՝ Ալեքսանդրապոլում, 1920 թվականին իրականացված ջարդերի մասին պատմագիտական քննություններ են: Սույն աշխատանքում առաջին անգամ Ջարդի ձորն ուսումնասիրվում է սոցիալ-մշակութային մարդաբանության տեսանկյունից: *Արդյունքներ.* Ջարդի ձորի՝ իբրև ֆիզիկական և խորհրդանշական լանդշաֆտի ձևավորման սկիզբ, կարելի է համարել 1965 թվականը, երբ տեղանքում Ռաֆիկ Եղոյանի կողմից կառուցվում է առաջին աղբյուր-հուշարձանը՝ որպես քննվող հիշողության լանդշաֆտի առանցքային տարր: Ջարդի ձորը նշանակալի դեր է խաղում տեղացիների մշակութային հիշողության ձևավորման գործում՝ ծառայելով որպես անցյալի տրավմատիկ իրադարձությունների նյութական վկայություն:

Բանալի բառեր՝ *Ջարդի ձոր, կոտորած, տրավմա, հիշողության ուսումնասիրություններ, հիշողության լանդշաֆտ, հուշարձանի ազգագրություն, սոցիալական և մշակութային հիշողություն, հիշողության նյութականացում:*

Ինչպես հղել՝ Աբրահամյան Դ. *Ջարդի ձոր. հիշողության լանդշաֆտի ձևավորումը (փուլ I)* // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2026: Հ. 1 (29): 104-117 էջեր:
DOI: 10.52971/18294316-2026.29.1-104

"JARDI DZOR": SHAPING THE LANDSCAPE OF MEMORY (PHASE I)

Diana V. Abrahamyan
Yerevan State University, RA

Abstract
Introduction: This paper conceptualizes ''Jardi Dzor'' (The Massacre Gorge) as a symbolic and physical site embodying collective trauma and collective memory. It aims to explore the ways in which social memory is materialized, taking ''Jardi Dzor'' as a case study. *Methods and materials:* The article examines the relationship between space and social memory, incorporating historical, spatial, social, and cultural dimensions. Through the combination of oral histories, expert interviews, and documentary evidence, the study demonstrates the process of the culturalization of ''Jardi Dzor'. *Analysis:* Drawing on a direct interview with architect Rafael Yeghoyan, this article provides a comprehensive account of the construction history of the memorial fountain erected in "Jardi Dzor" in 1965, dedicated to the victims of the 1915 Armenian Genocide. Existing studies concerning "Jardi Dzor" have primarily addressed the 1920 massacres in Alexandropol (Eastern Armenia) from a historiographical perspective. This study, for the first time, explores "Jardi Dzor" through a socio-cultural anthropological lens, shifting the focus from conventional historical narratives to the processes of memory-making and cultural meaning. *Results:* The formation of Jardi Dzor as both a physical and symbolic landscape can be traced back to 1965, when the first memorial fountain was constructed in the area by Rafik Yeghoyan. This structure became a central element in the memory landscape examined in this study. Jardi Dzor

plays an active role in shaping the cultural memory of the local community, serving as a tangible embodiment of collective trauma and a material witness to the violent events of the past.

Key words: *Jardi Dzor, massacre, trauma, memory studies, memory landscape, ethnography of the monument, social and cultural memory, materialization of memory.*

Citation: Abrahamyan D. *"Jardi Dzor": Shaping the Landscape of Memory (phase I)* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2025, Vol. 1 (29). 104-117 pp. DOI: 10.52971/18294316-2026.29.1-104

Ն Ա Խ Ա Բ Ա Ն. Քեմալականների կողմից իրականացված զանգվածային կոտորածների ամենահայտնի վայրը Արևելյան Հայաստանում Հզազի ձորն է, որը հայտնի է նաև «Ջարդի ձոր» անվամբ: Այն գտնվում է Ջաջուռի լեռնանցքում՝ Լոռու և Շիրակի մարզերի սահմանագլխին, Լուսաղբյուր և Ջաջուռ գյուղերի միջև: 1920 թվականին թուրքական ուժերը բռնի և խարդավանքների միջոցով տեղահանել են Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառների բնակիչներին՝ նրանց տեղափոխել Հզազի ձոր, որտեղ և կազմակերպել են զանգվածային կոտորածներ [8, էջ 78]: Այս իրադարձությունները դարձել են հարակից գյուղերի պատմության ամենածանր էջերը [5, էջ 187]: Վերապրածների և նրանց սերունդների հիշողություններում դրանք պահպանվել են որպես անցյալի տրավմատիկ իրադարձություն, որը խեղել է մարդկային բազմաթիվ ճակատագրեր և խոր հետք թողել տեղի բնակչության սոցիալական հիշողության մեջ (տե՛ս [4]):

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ Ո Ւ Ն. Կոտորածների վայրերը հաճախ ձեռք են բերում խորհրդանշական նշանակություն այն համայնքների համար, որոնց նախնիները վերապրել են ցեղասպանություն կամ զանգվածային բռնություններ: Ջարդի ձորը այս առումով կենտրոնական տեղ է զբաղեցնում մերձակա գյուղերի բնակիչների հավաքական հիշողության մեջ՝ դառնալով ուխտատեղի 1920 թվականին տեղի ունեցած զանգվածային սպանությունների զոհերի սերունդների համար:Տեղացիների բանավոր պատմությունները վկայում են, որ կոտորածների հիմնական թիրախը եղել են կանայք, երեխաները և տարեցները, քանի որ տղամարդկանց զգալի մասը նախապես հավաքագրվել էր ռազմական նպատակներով (տե՛ս [7,8,9,10]): Այս իրադարձությունների մասին հիշողությունները փոխանցվել են սերնդեսերունդ, դառնալով ոչ միայն անհատական, այլև «սոցիալական հիշողության» (տե՛ս [18]) բաղկացուցիչ մասը: Վերապրածների հիշողությունները սոցիալական պատմության մի մաս են դարձել՝ փոխանցվելով բանավոր ավանդույթի միջոցով: Կոտորածների ընթացքում փրկվածները վերադարձել են իրենց բնակավայրեր միայն 1921 թվականին՝ բախվելով անթաղ դիակներով պատված տների և ավերված գյուղերի սարսափելի պատկերին [5, էջեր 187-188]: Ինչպես վկայում են տեղաբնակների վերհուշները, կոտորածի վայրերում տարիներ շարունակ տարածված է եղել այրված դիերի հոտը, ինչը դարձել է ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական տրավմայի բաղկացուցիչը:[2]

Ջարդի ձորը ոչ միայն հիշողության վայր է, այլև սոցիալական ցավի հավաքական մարմնացում, որտեղ անհատական վերապրումները վերածվել են սոցիալական հիշողության և համայնքային ինքնության կարևոր տարրերի: 1965 թվականին այստեղ

[2] **Աբրահամյան Դ.**, ԴՆ, բանասաց Տանյա Քոչարյան՝ 85 տարեկան, Լուսաղբյուրից, Երևան, 05.03.2024:

կանգնեցված աղբյուր-հուշարձանը (նկ. 1) դարձավ հիշողության նյութականացման առաջին քայլը, որը հաստատեց տարածքի խորհրդանշական նշանակությունը և ամրապնդեց դրա դերը «հիշողության լանդշաֆտի[3]» ձևավորման գործում:

«Լռեցված հիշողությունը»

Խորհրդային Միությունում հիշողության քաղաքականությունը ձևավորվում էր «ժողովուրդների բարեկամության» և վերազգային ինքնության ամրապնդման սկզբունքով: Այս շրջանակներում ցանկացած հիշողություն, որը կարող էր հակասել այդ գաղափարախոսությանը, ենթարկվում էր մոռացման: Ինչպես նկատել է ազգագրագետ Հրանուշ Խառատյանը՝ «1920-ական թվականներից սկսած՝ Խորհրդային Միության և Թուրքիայի միջև բարեկամական հարաբերությունների պահպանման նպատակով Հայոց ցեղասպանության թեման դուրս մղվեց պատմագրությունից, իսկ Եղեռնից փրկվածների նկատմամբ կիրառվեց «հրամայված մոռացման» քաղաքականությունը» [24, c.134]: Ցեղասպանության հիշատակման ցանկացած ձև՝ թե՛ անհատական, թե՛ հանրային, ճնշվում էր. արգելվում էր վշտի հրապարակային դրսևորումը, իսկ թեմայի քննարկումը պետական մակարդակով բացառվում էր: Այնուամենայնիվ, անգամ պետական վերահսկողության պայմաններում 1915-ի իրադարձությունները շարունակեցին պահպանվել հայերի սոցիալական հիշողության մեջ:

Հիշողության հետազոտողները նշում են, որ հիշողությունը շարունակում է գոյություն ունենալ, քանի դեռ այն կրող խումբը կա և համարում է այն կարևոր [12, էջ 25]:

Սակայն սոցիալական հիշողությունը երբեմն ձևավորվում է ոչ թե փաստական գիտելիքի, այլ սերնդեսերունդ փոխանցվող տեղեկությունների հիման վրա [22, pp. 56-58]: Այդպիսի օրինակ է 1920-ական թվականներին Զարդի ձորում տեղի ունեցած կոտորածի հիշողությունը: Տեղացիները «գիտեն», որ այդ ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի Շիրակի և Լոռու շրջանների հարակից գյուղերից բռնի տեղահանված բնակիչները զանգվածային կոտորածների զոհ են դարձել Զարդի ձորում: Սակայն, քանի որ խորհրդային իշխանության պայմաններում այս իրադարձությունները գրեթե չէին արձանագրվում և չէին քննարկվում մամուլում, դրանց վերաբերյալ հիշողությունը ձևավորվել է հիմնականում բանավոր ավանդույթի միջոցով՝ վերածվելով «սոցիալական գիտելիքի»[4]:

---

[3] ‹‹Հիշողության լանդշաֆտ›› եզրույթը այլաբանություն է, որի միջոցով փորձում են արտահայտել վայրի, տարածքի և հիշողության միջև փոխկապվածությունը՝ ներառելով ոչ միայն անձնային հիշողությունները, այլև առասպելաբանական պատումներ, նյութական միջավայրից եկող զգայական ազդեցությունը և նյութական միջավայրն ինքնին››: (տե՛ս [15]): Այս մոտեցումը ձևավորվում է Պիեռ Նորայի ‹‹հիշողության վայրեր›› [19, pp. 7-24] հայեցակարգի հիման վրա, սակայն տեքստում օգտագործվում է ‹‹լանդշաֆտ›› հասկացությունը՝ ընդգծելով ոչ միայն կոնկրետ ֆիզիկական կամ սիմվոլիկ վայրերը, այլև դրանց միջև դինամիկ կապերը, ինչպես նաև հիշողության ձևավորման գործընթացների տարածական բնույթը:

[4] Այստեղ մենք նկատի ունեք գիտելիք՝ որը ձևավորվում և պահպանվում է հասարակության կամ համայնքի ներսում՝ անկախ դրա փաստացի, նյութական կամ գրավոր հիմքերից: Այն կարող է գոյություն ունենալ նույնիսկ այն դեպքերում, երբ տվյալ փաստերը փաստաթղթավորված չեն կամ պատմականորեն լիարժեքորեն ուսումնասիրված չեն: Այս տեսակի գիտելիքը հաճախ փոխանցվում է բանավոր ավանդույթի միջոցով՝ սերնդեսերունդ հաղորդվելով հուշերի, պատմությունների, առասպելների կամ տեղային պատումների ձևով [21, pp. 17-25]:

Այս երևույթի դրսևորումներից է Ջարդի ձորում Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշաղբյուր-հուշարձանի նախագծող՝ Ռաֆիկ Եղոյանի պատմությունը, որն իր գիտելիքը Ջարդի ձորի իրադարձությունների մասին ձևավորել է իր մոր միջոցով՝ Սուրբ Հովհաննես մատուռ ուխտագնացությունների ժամանակ: Նրա մայրը տարիներ շարունակ այցելել է մատուռ՝ որդի ունենալու խնդրանքով, և նրա ծնվելուց հետո (1931 թ.) այս վայրը դարձել է ընտանեկան սրբավայր: Պատանեկան տարիքում, հերթական անգամ ուղևորվելով մատուռ, հանդիպում է տեղացի առևտրական Հակոբին, որը վրդովվում է՝ տեսնելով, որ պատանին տեղյակ չէ անցյալի իրադարձություններից: Նա մատնանշում է տարածքի այլընտրանքային անվանումը՝ «Հզազի ձոր»՝ շեշտելով, որ «Հզազը քայքայիչ է»: Հակոբը պատմում է, որ այստեղ, ավելի քան երկու տասնամյակ առաջ, զանգվածային կոտորած է տեղի ունեցել:[5]

Համաձայն Ցան Ասմանի հիշողության տեսության՝ սոցիալական հիշողության դինամիկան առավել ակնհայտ դրսևորվում է սերնդափոխության ժամանակ, որը սովորաբար տեղի է ունենում 30 տարվա միջակայքում [22, cc. 245-248]: Այս ընթացքում տեղի է ունենում արժեքների և հիշողության վերագնահատում, հատկապես տրավմատիկ անցյալի դեպքում: Հետևաբար, Ջարդի ձորի կոտորածը վերապրածների համար ևս անհրաժեշտ էր որոշակի ժամանակ, որպեսզի լռեցված հիշողությունները հաջորդ սերնդում վերածվեին ձևավորված պատմական գիտակցության: Հատկանշական է, որ այս տարածքի բնակիչների շրջանում մեծ թիվ էին կազմում նաև 1915-ի ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայերը, որոնց հետագա փորձառությունը կրկնակի տրավմատիկ էր. նրանք ենթարկվեցին ոչ միայն 1920-ականների ջարդերին, այլև խորհրդային բռնաճնշումներին [6, էջեր 110-112]: Արդյունքում ձևավորվեց հիշողության լռեցման մի յուրահատուկ մշակույթ, որը միայն երրորդ-չորրորդ սերնդի շրջանում սկսեց վերածվել բացահայտ հանրային խոսույթի:

«Կերտելով հիշողությունը»

Հուշարձանների կառուցումը հիշողության նյութականացման գործիքներից մեկն է, որի միջոցով հասարակությունները պահպանում և փոխանցում են իրենց հավաքական անցյալը:

20-րդ դարի կեսերից Խորհրդային Հայաստանում խմբակային ոգեկոչումների հիմնական թեման ցեղասպանության տրավման էր [13]: 1960-ականներից, ԽՍՀՄ սոցիալական արդիականացման քաղաքականության շրջանակում, ձևավորվեց նաև խորհրդային հիշատակի մոդելը, ինչը պայմանավորեց հուշարձանների կանգնեցման թեմաների քննարկման ակտիվացումը: Խրուշչովյան շրջանի մեղմացումները խթանեցին սոցիալական և գաղափարական փոփոխություններ Խորհրդային Հայաստանում: Տեղի ղեկավարությունը ձեռնարկեց մի շարք նախաձեռնություններ՝ 1914-1923 թթ. իրադարձությունների նոր մեկնաբանման ուղղությամբ, որտեղ ցեղասպանությունը դարձավ ազգային ինքնության առանցքային տարր [2]: Այդ նախաձեռնություններից ամենանշանակալին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցումն էր 1967 թվակա-

[5] **Աբրահամյան Դ.** ԴՆ, հարցազրույց ճարտարապետ Ռաֆայել Եղոյանի հետ, 93 տարեկան, Ջրվեժ, 27.02.2024:

նին [13, էջ 109]: Այդ տարիներին ևս Լենինականի (ներկայիս Գյումրու) կուսքաղկոմի ղեկավարությանը ներկայացվում է առաջարկ՝ կառուցելու ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան:[6] Հուշարձանի ճարտարապետական նախագծի մրցույթը կազմակերպվում է Հայպետնախագիծ ինստիտուտի Գյումրու մասնաճյուղի կողմից, որտեղ ակտիվ մասնակցություն է ունենում ճարտարապետ Ռաֆիկ Եղոյանը: Նա առաջարկում է հուշակոթողի կառուցման վայր ընտրել Զարդի ձորը՝ հիշողությունում ունենալով տեղանքի խորհրդանշական նշանակության մասին գիտելիքը: Այս որոշման շրջանակում Վարազդատ Հարությունյանի հետ կազմակերպվում է տեղզբնում, որի ընթացքում նրանք ծանոթանում են տարածքին և զրուցում ականատեսների հետ:[7] Մրցույթային նախագծերը պետք է համապատասխանեին Խորհրդային Միության պաշտոնական գաղափարական քաղաքականությանը, ինչը սահմանափակում էր հայկական ազգային խորհրդանիշների կիրառումը: Նման սահմանափակումներից խուսափելու նպատակով ճարտարապետը որոշում է առաջարկել մի այնպիսի հուշակոթող, որը չէր հակասի խորհրդային գաղափարախոսությանը: Հուշարձանը կառուցվում է 1965 թվականին, սակայն դրա պաշտոնական թվագրումը տարբեր աղբյուրներում հակասական է: Մասնավորապես, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տվյալները չեն համընկնում ճարտարապետի նշած տարեթվի հետ:[8]

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղբյուր-հուշարձանի կառուցման տարեթիվը հուշարձանի վկայագրում արձանագրվել է՝ 1968թ., հիմք ընդունելով տեղացիների կողմից նշված թիվը, հնարավոր է՝ փաստացի տարեթիվը շեղված է՝ պայմանավորված սոցիալական հիշողության յուրահատկություններով: Համայնքի հիշողությունը ձևավորվել է հիմնականում բանավոր ավանդույթի միջոցով, ինչը կարող է հանգեցնել ժամանակային շեղումների կամ տարեթվերի խառնման: Նման շեղումները բնորոշ են այն դեպքերում, երբ գրավոր աղբյուրները բացակայում են, և տեղեկությունները փոխանցվում են սերնդեսերունդ՝ պահպանելով որոշ մանրամասներ, բայց կորցնելով

---

[6] **Աբրահամյան Դ.** ԴՆ, հարցազրույց ճարտարապետ Ռաֆայել..... :

[7] **Նույնը:**

[8] Ըստ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի կողմից կազմած հուշարձանի վկայագրի՝ այն կառուցվել է 1968 թվականին: Հուշաղբյուր-հուշարձանը գտնվում է Շիրակի մարզի, Ախուրյանի ենթաշրջանի Զաջուռ գյուղից 4կմ հյուսիս-արևելք՝ Գյումրի-Սպիտակ ավտոմայրուղու ձախակողմյան հատվածում՝ «Զարդի ձոր» կոչվող վայրում: Պատրաստված է մոխրագույն բազալտի և սև տուֆի համադրությամբ: Այն եռաստիճան հարթակի վրա, քիվավոր երկմասանի պատվանդանին կանգնած 3 ուղղանկյուն, տարբեր բարձրության սալեր են, որոնք վերնամասում ավարտվում են քիվերով: Միջին սալը քանդակազարդ է: Առջևինի վերնամասում հավերժության խորհրդանիշ ալ կլոր վարդյակ է, որից ցած փորագրված է Եղիշեի ասույթներից.‹‹Ի մահ համարեալ էին և մահք իւրեանց անշուշտ կեանք: Եղիշե››

Պատվանդանին ջրի 5 ծորակներ են՝ պսակված վահանաձև վարդյակներով: Պատվանդանին փորագրված է. ‹‹Հիշատակ Մեծ Եղեռնի հայ նահատակներին››:

Հուշաղբյուր-հուշարձանը ունի տեղական նշանակություն, պատկանում է համայնքին, և ՀՀ կառավարության 09.09.2004 թ. Հ.1270-Ն որոշմամբ վերցվել է պետական պահպանության տակ: Հուշաղբյուր-հուշարձանի չափերը՝ 2.5 X 1.4 մ է, իսկ պահպանության գոտու տարածքը՝ 120 քառ.մ (տեղեկությունը՝ ըստ հուշարձանի վկայագրի):

ճշգրիտ թվական տվյալները [21, pp. 27-28]։ Հավանական է, որ սոցիալական հիշողության մեջ 1968 թվականը պահպանվել է ոչ թե որպես աղբյուր-հուշարձանի փաստացի կառուցման տարեթիվ, այլ որպես այցելության կամ խորհրդանշական ճանաչման հիշվող պահ։ Հաշվի առնելով, որ 1965 թվականին ընդունվել է Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի կոթող կառուցելու որոշումը և Հայոց ցեղասպանության 50-ամյակի զանգվածային ոգեկոչումը՝ համայնքային հիշողության մեջ կարող է ձևավորվել ժամանակային շփոթ։ Նման պարագայում տեղացիները հուշարձանի կառուցման իրական տարեթիվը կարող էին վերագրել մեկ այլ հիշվող իրադարձության՝ օրինակ՝ համանման հուշարձանի կառուցմանը։ Սոցիալական հիշողության մեջ այս տեսակ շփոթները բնորոշ են այն դեպքերում, երբ հուշարձանները այս կամ այն պատճառով որոշակի ժամանակ «մոռացության» են մատնվում զանգվածների կողմից։ Այս պարագայում հիշողությունը «կենտրոնանում է» ոչ թե ֆիզիկական կառուցման տարեթվի վրա, այլ զգացական կամ խորհրդանշական իրադարձությունների ժամանակային հանգույցների։

Զարդի ձորի հուշարձանի ստեղծման գործընթացը կարևոր օրինակ է, թե ինչպես է սոցիալական հիշողությունը վերածվում մշակութային հիշողության՝ ազդելով պատմական իրադարձությունների ընկալման և հանրային հիշատակի մշակույթի ձևավորման վրա։

Աղբյուր-հուշարձանի կառուցումը՝ խորհրդային հասարակարգի պայմաններում

«*Մեզ հաջողվեց Լենինականի ճարտարապետներին՝ իբրև կառուցող ինձ, ֆինանսավորող Վարդանյան Արարատին, օգնող ընկեր Ջիվանյան Հակոբին կառուցել այդ հուշարձանը*»[9]։

Ռաֆիկ Եղոյանի նախագծած աղբյուր-հուշարձանի վայրի ընտրությունը Զարդի ձորում կանխամտածված էր խորհրդանշական առումով, թեև կառուցման թույլտվությունը պայմանավորված էր դրա՝ ավտոմայրուղու մոտ լինելու հանգամանքով և հուշարձանին կից աղբյուրի առկայությամբ՝ այդ տարիներին ընդունված պրակտիայի համաձայն [3]։

Զարդի ձորի հուշարձանի ճարտարապետական ձևավորումը խորհրդային սահմանափակումների շրջանում ազգային հիշողության նյութականացման յուրահատուկ օրինակ է։ Թեև այն չի կրում խաչքարի դասական կերպարանքը, նախագծող ճարտարապետ Ռաֆիկ Եղոյանը փորձել է հուշարձանին հաղորդել խաչքարային արտահայտչականություն (ինչպես դա անում էր իր ուսուցիչը՝ Ռաֆայել Իսրաելյանը [16, էջեր 374-376]) ՝ օգտագործելով խաչքարին բնորոշ երկրաչափական կառուցվածք, քիվեր, իսկ կրակի լեզվանախշերը՝ խաչի փոխարեն։ Այս մոտեցումը թույլ էր տալիս պահպանել ազգային ոճական տարրերը՝ խուսափելով խորհրդային գաղափարախոսության հետ բացահայտ բախումից։ Հուշարձանի կառուցման գաղափարն ու վայրը հաստատված էին, սակայն ֆինանսավորման հարցը մնում էր չլուծված։ Այդ տարիներին քաղսովետի նախագահ Էմիլ Կիրակոսյանը հրաժարվում է պետական աջակցություն ցուցաբերել, պատճառաբանելով, որ նախաձեռնությունը կարող է առաջացնել ավելորդ խնդիրներ։ Փոխարենը, նա խորհուրդ է տալիս ֆինանսավորումն ապահովել

[9] **Աբրահամյան Դ.** ԴՆ, հարցազրույց ճարտարապետ Ռաֆայել ..... ։

ճարտարապետի և Ախուրյանի բնակիչների միջոցներով: Ֆինանսական միջոցների ապահովման խնդիրը լուծվում է Արարատ Վարդանյանի՝ ճանապարհաշինական հիմնարկի պետի միջնորդությամբ: Ոգեշնչվելով հուշարձանի գաղափարով՝ նա համաձայնվում է ֆինանսավորել այն՝ ձևակերպելով որպես ճանապարհային այլ օբյեկտի կառուցում: Այս կերպ հուշարձանի ֆինանսավորումը պաշտոնապես փաստաթղթավորվում է, սակայն առանց դրա իրական նպատակի բացահայտման: Կառուցման աշխատանքները մեկնարկում են 1964 թվականին, սակայն դրանց ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները փոխում են տեղական իշխանությունների վերաբերմունքը: Հուշարձանի հիմնարկման ժամանակ, երբ զուգահեռ ընթանում էին ճանապարհաշինական աշխատանքներ, հայտնաբերվում են 1920 թվականի կոտորածների զոհերի մասունքներ: Բանավոր պատմությունների համաձայն՝ գտածոների թվում եղել է ծեր կնոջ փակ ափով ձեռք, զարդարված կտորե ապարանջանով, իսկ փակ ափի մեջ՝ տան բանալիներ: Կնոջ կողքին գտնվել է նաև երեխայի գանգի մնացորդներ:[10] Այս դեպքը էական ազդեցություն է ունենում տեղական իշխանությունների վերաբերմունքում: Ռաֆիկ Եղոյանը, գտած մասունքները ներկայացնում է Գյումրու կուսքաղկոմի ղեկավար Ղարիբջանյանին, որը, տեսնելով մասունքները, անմիջապես այցելում է տեղանք: Անմիջապես կարգադրվում է տարածքը մաքրել հանրային նշանակության օբեկտներից (զուգարան, տաղավարներ և այլն), իսկ հուշարձանի կառուցման գործընթացը արագացնել: Հետագայում ևս Ալեքսանդրապոլից դեպի Ղարաքիլիսայի կայարանի ուղղությամբ թունելից (երկաթգծի Ջաջուռի թունել) վերև գտնվող ձորից անտառտնտեսության աշխատանքների ընթացքում հայտնաբերվում են կանանց դիակներ [8, էջեր 78-79]:

1965 թվականին հուշարձանի կառուցման աշխատանքներն ավարտվում են: Այն ոչ միայն դառնում է 1920 թվականի զոհերի հիշատակի խորհրդանիշ, այլև խորհրդային համակարգում ազգային տրավմատիկ հիշողության նյութականացման առաջին վկայություններից:

Աղբյուր-հուշարձանի պատմության ամենահետաքրքիր էջերից մեկը դրա ոչ պաշտոնական, խորհրդանշական բացման արարողությունն է: Հայտնի է, որ «խորհրդային տարիներին տեղի էին ունենում «արձաններ» տեղադրելու բացահայտ և գաղտնի պատերազմներ» [2, էջ 268]: Չնայած հուշարձանը պաշտոնապես չի բացվել հանդիսավոր արարողությամբ, այն իր ձևով ստացել է գաղտնի, բայց խորապես խորհրդանշական «օրհնություն»՝ տեղի բնակիչների՝ «տաքսիստների» կողմից: Հուշարձանը կառուցվել էր մի վայրում, որի հիշողության մեջ դեռևս կենդանի էին 1920 թվականի կոտորածների ականատեսների պատմությունները: Մոտակա գյուղերի բնակիչները, որոնց ընտանիքի անդամներն անմիջական զոհեր կամ ականատեսներ էին եղել, հուշարձանը տեսնում էին ոչ միայն որպես ճարտարապետական կառույց, այլև որպես անցյալի ցավի նյութական հիշեցում: Բացումը տեղի է ունեցել գիշերով՝ առանց պաշտոնական արարողությունների, խոսքերի կամ հանդիսավոր միջոցառումների:[11] «Ուշ գիշեր էր, երբ

[10] **Աբրահամյան Դ.** ԴՆ, հարցազրույց ճարտարապետ Ռաֆայել ..... :

[11] Այս դրվագի մասին իր հոդվածում անդրադառնում է նաև Գայանե Շագոյանը (տե՛ս 25, cc.134-135).

բնակարանի մուտքի դռան զանգը հնչեց։ Դռան մոտ կանգնած էին տաքսու վարորդներ և արիմիության նախագահը՝ Լևոնի հայրը։ Առանց որևէ բացատրության առաջարկեցին «գնալ մի տեղ», ինչը սկզբում տարօրինակ թվաց, սակայն համաձայնվեցի»[12]։ Երբ մեքենայով հասնում են Ջարդի ձոր, պարզվում է, որ այնտեղ, հուշարձանի մոտ, փոքրիկ խարույկներ են վառած, իսկ տեղի տաքսիստները խորոված են պատրաստում։ Այս գիշերային հավաքույթը, ըստ էության, դառնում է հուշարձանի ոչ պաշտոնական, բայց խորհրդանշական բացման արարողությունը և ալեգորիկ վերարտադրում մահվան ծեսի ժամանակ «հոգեհանգստի հաց» մատուցելու սովորույթը։ Այն շնորհակալության ու հարգանքի դրսևորում էր՝ ուղղված ճարտարապետին, ով, համարձակորեն շրջանցելով խորհրդային գաղափարախոսության սահմանափակումները, ստեղծել էր այս հիշատակի հուշարձանը։ Այսպես, հուշարձանը սկսեց իր գոյությունը՝ որպես լուռ վկա այն ողբերգական իրադարձությունների, որոնք երկար տարիներ լռեցված էին։

Համաժամանակյա զուգահեռները

1965 թվականը շրջադարձային էր Հայոց ցեղասպանության հիշողության հանրայնացման գործում։ Այդ թվականին՝ ապրիլի 24-ին, Երևանում տեղի ունեցած մասշտաբային բողոքի ցույցերի հետևանքով կայացվեց որոշում կառուցել Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը՝ որպես պետականորեն ճանաչված հիշատակի վայր [23, cc. 9-12]։ Մինչ Երևանում դեռ մրցութային փուլում էին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի նախագծերը, Էջմիածնի վանքի տարածքում արդեն կառուցվում էր Եղեռնի զոհերին նվիրված խաչքարը՝ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով [11, էջ 40]։ Նույն ժամանակահատվածում, ըստ Ռաֆայել Եղոյանի ներկայացրած տվյալների, կառուցվել է Ջարդի ձորի հուշարձան-հուշաղբյուրը։ Ռաֆիկ Եղոյանը, լինելով Ռաֆայել Իսրայելյանի աշակերտը, ըստ էության, շարունակել է իր ուսուցչի մշակած ճարտարապետական ոճը, որը վերարտադրում էր միջնադարյան և 18-19-րդ դարերի հայկական աղբյուրների հորինվածքը [17, էջ 133]՝ ընդգրկելով երկթեք տանիք, կամար-խորան, վարդյակ (որից ջուր էր բխում) և ջրահավաք ավազան։[13]

1965 թվականին և դրանից անմիջապես հետո կառուցված երեք հուշարձանները՝ Ջարդի ձորի հուշաղբյուրը, Էջմիածնի խաչքարը և Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը, արտացոլում են Հայոց ցեղասպանության հիշողության տարբեր մարմնավորումներ։ Եթե Էջմիածնի խաչքարը բացահայտ կրում էր կրոնական խորհրդաբանություն՝ հիմնված քրիստոնեական նահատակության գաղափարի վրա, ընդգծելով եկեղեցու

[12] **Աբրահամյան Դ.** ԴՆ, հարցազրույց ճարտարապետ Ռաֆայել ..... :

[13] Ճարտարապետի վկայությամբ՝ նախատեսվող հուշահամալիրը պետք է ներառեր նաև զմբեթածածկ, մատուռատիպ կառույց, որը պետք է հիշեցներ միջնադարյան եկեղեցական ճարտարապետությունը։ Այս կառույցը, համադրվելով աղբյուրի հոսող ջրի ձայնի հետ, ստեղծելու էր ընդհատակից բխող բողոքի խորհրդանշական ձայնային միջավայր։ ‹‹Բողոքի մատուռի›› գաղափարին աջակցում էին ինչպես Ռաֆայել Իսրայելյանը, այնպես էլ քանդակագործ Արա Հարությունյանը։ Սակայն, քանի որ մատուռը չի կառուցվել, աղբյուր-հուշարձանը չի ներառել քանդակագործական տարրեր։ Այդուհանդերձ, հուշարձանի դեկորատիվ նախշերի շաբլոնների պատրաստման գործում կարևոր մասնակցություն է ունեցել գյումրեցի ճարտարապետ-քանդակագործ Հակոբ Ջիվանյանը։ (**Աբրահամյան Դ.** *ԴՆ, հարցազրույց ճարտարապետ Ռաֆայել Եղոյանի հետ, 93 տարեկան, Ջրվեժ, 27.02.2024:*)

դերը ցեղասպանության զոհերի հիշատակման գործում, ապա, Զարդի ձորի հուշաղբյուրը, արտացոլում էր խորհրդային իրականության մեջ հիշողության փոխանցման սահմանափակումները: Այն ժառանգում էր հայկական ավանդական աղբյուր-հուշարձանների ձևերը՝ պահպանելով հիշատակի մշակութային ծածկագրերը, սակայն առանց բացահայտ կրոնական խորհրդանիշների, ինչը թույլ կտար այն ընդունելի դարձնել խորհրդային իշխանությունների համար: Ի հակադրություն այս երկուսի՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը ձևավորվեց որպես պետականորեն հաստատված հիշատակի վայր, որը, չնայած խորհրդային գաղափարախոսության շրջանակներում գործելուն, ընդգրկում էր ազգային ինքնության ընդգծված տարրեր: Այս երեք հուշարձանների տարբերությունները պայմանավորված էին ոչ միայն դրանց կառուցման նախաձեռնող կառույցներով, այլև Խորհրդային Հայաստանի սոցիալ-քաղաքական միջավայրով, որը սահմանում էր ցեղասպանության հիշողության հանրային ներկայացման ձևաչափերը:

Թեև Զարդի ձորի հուշարձանը, ի տարբերություն նախորդ երկուսի, չունեցավ հանդիսավոր բացում, այդուհանդերձ, այդ քայլով «արթնացրեց» տեղի բնակչության շրջանում երկար տարիներ լռեցված և ճնշված հիշողությունները: Գաղափարի առաջացման խորհրդանշական պատմությամբ, տեղի ընտրության և հատկապես հիմնարկման ժամանակ գտնված մասունքների վրա կառուցման հանգամանքով այն դարձավ 1920 թվականին թուրք-հայկական պատերազմի ընթացքում Զարդի ձորում իրականացված կոտորածների մասին հիշողության առաջին ամփոփ վկայությունը՝ Զարդի ձորը Շիրակում դարձնելով մի նոր Դեր-Զոր:

Հիշատակման մշակույթի ձևավորումը

Բնութագրական է, որ խորհրդային ամբողջատիրական շրջանում ցեղասպանության թեմայով կառուցված հուշարձանի մոտ հիշատակման մշակույթի ձևավորման վերաբերյալ ձեռնարկումները անիրատեսական էին, քանի որ թեման լռության էր մատնված և կիսատաբուավորված (տե՛ս [14]): Խորհրդային տարիներին միակ արարողակարգը եղել է երթը դեպի Ծիծեռնակաբերդ, սակայն արարողակարգային մաս չի ունեցել, հետևաբար հիշողությունը հետագայում չի ենթարկվել իստիտուցիոնալիզացիայի և, որպես այդպիսին, չի ձևավորվել հիշատակման մշակույթ: Վերոնշյալի հենքին միանգամայն օրինաչափ են թվում այն զարգացումները, որոնք տեղի են ունեցել հետագա տարիներին Զարդի ձորում: Աղբյուր–հուշարձանի կառուցումից հետո,թեև համընդհանուր կոմեմորատիվ մշակույթ[14] չի ձևավորվել ըստ օբյեկտիվ պատճառների, սակայն եղել են լոկալ փոքր խմբով այցելություններ. դրա մասին են վկայում լուսանկարները (նկ. 2), բանավոր պատմությունների միջոցով մեզ հասած տեղեկությունները:

Այցերը հիմնականում եղել են ինքնաբուխ, նեղ շրջանակների կողմից և կամայական օրերի, որոնք իրենց հերթին ակտիվացել են միայն 1970-ականների վերջերից: Պատմություններից մեկի համաձայն, որպես այդպիսին, ապրիլի 24-ին հուշարձան

[14]Կոմեմորատիվ մշակույթը հանրային հիշողության այն դրսևորումն է, որն արտահայտվում է հիշատակի արարողակարգերի, հուշարձանների կառուցման, տարելիցների կազմակերպման, պետական և ոչ պետական արշավների, ինչպես նաև կրթական, մեդիա կամ արվեստի ոլորտում հիշողության ձևավորման ու վերարտադրման գործիքները՝ ապահովելով պատմական անցյալի պահպանումն ու փոխանցումը հաջորդ սերունդներին: (տե՛ս [20])

այցելության ավանդույթի հիմքը դրվել է Սարգիս Պետրոսյանի և իր ընկերների կողմից։[15] Ընդ որում, ինքը՝ Սարգիս Պետրոսյանը, Ծիծեռնակաբերդ այցելության ավանդույթը իր հետ բերել է Զարդի ձոր, հետևաբար մենք գործ ունենք «պայմանական ավանդույթի»[16] հետ, քանի որ այն ավանդույթ է եղել փոքր խմբի համար։ Սարգիս Պետրոսյանը, լինելով պատմաբան, և տեղյակ լինելով 1920 թվականի իրադարձություններին, ինչպես նաև տեղանքի նշանակության մասին, ուսումնառության ավարտից հետո Երևանից վերադառնալով Գյումրի, 1978-1979 թվականներին իր ընկերներ՝ քանդակագործ Զավեն Կոշտոյանի, ճարտարապետ Լևոն Մինասյանի, շինարար-ինժիներ Ստեփան Հարությունյանի, ֆիզիկոս Հարութ Ջիվանյանի և Խաչիկ Դանիելյանի հետ սկսել են ամենամյա ապրիլքսանչորսյան այցելությունները հուշարձան։ Հետագայում այցելությունները ակտիվացել են 1990 ական թվականներին, տարածքում կառուցված մեկ այլ օբյեկտի՝ «Կամք» խաչքարի կանգնեցմամբ։

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. 1965 թվականին հուշարձանի կառուցումը Խորհրդային Հայաստանի քաղաքական և գաղափարախոսական պայմաններում նշանավորեց հիշողության լանդշաֆտի ձևավորման առաջին փուլը Զարդի ձորում։ Չնայած սկզբնական շրջանում դրա նկատմամբ հանրային հետաքրքրության բացակայությանը, 1970-ականներից սկսած այն տեղական խմբերի կողմից ընդգրկվեց ապրիլքսանչորսյան հիշատակման արարողությունների շրջանակում։ Այս գործընթացը կարևոր դեր խաղաց ոչ միայն 1915 թվականի զոհերի հիշատակի վերաիմաստավորման, այլև 1920 թվականի բռնությունների մասին հիշողության վերակենդանացման գործում։ Զարդի ձորը վերածվեց խորհրդանշական վայրի՝ այն դարձնելով մի նոր Դեր-Զոր Շիրակի մարզում։

ՀԱՎԵԼՎԱԾ

Նկ.1. Հուշաղբյուր ‹‹Մեծ եղեռնի զոհերին››. Լուսանկարը՝ Աբրահամյան (2024թ)

Նկ.2 Լուսանկար 1970-ականների. (Դ.Մալխասյանի անձնական արխիվից)

[15] **Աբրահամյան Դ.** ԴՆ, բանասաց Սարգիս Պետրոսյան, Գյումրիից, Երևան, 07.04.2024։

[16] ‹‹Պայմանական ավանդույթ›› ասելով նկատի ունենք ավանդույթ, որը ձևավորվում է որոշակի պայմանների կամ իրավիճակների հետևանքով, սակայն դրա կիրառությունը կամ պահպանումը հաճախ լինում է ժամանակավոր կամ պայմանական՝ կապված սոցիալական տարբեր խմբերի վարքագծի հետ։

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աբրահամյան Դ.** *Դաշտային նյութեր*: Երևան: 2024:
2. **Աբրահամյան Լ. Շագոյան Գ.** *Պատմագրության և հիշողության միջև Խորհրդային Հայաստանի բռնաճնշումների հուշարձանացումը://Ստալինյան բռնաճնշումներն Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա:* Երևան: ՀՀ ԳԱԱ ‹‹Գիտություն››: 2015: 238-283 էջեր:
3. **Աթանեսյան Գ.** *Խորհրդային և հետխորհրդային հուշարձանն արդի հայաստանյան դիսկուրսում:* Թեկն. ատեն., ՀՀ, ԵՊՀ մշակութաբանության ամբիոն, 2018: 206 էջ:
4. **Բազեյան Կ.** *1918-1921թթ. իրողությունները շիրակցիների բանավոր հիշողության մեջ. նյութերի ժողովածու,* ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2023: 283 էջ:
5. **Խանզադյան Մ.** *Իմ հայրենի գյուղ՝ Փամբակի Լուսաղբյուրը:* Երևան: ‹‹Հրազդան›› հրատ.: 2000: 272 էջ:
6. **Խառատյան Հ.** *Նացիոնալիզմի դիսկուրսը և ցեղասպանության հիշողության թիրախավորումը քաղաքական բռնություններում:*//Ստալինյան բռնաճնշումներն Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա: Երևան: ՀՀ ԳԱԱ ‹‹Գիտություն››: 2015: 102-118 էջեր:
7. **Հախոյան Վ.** *Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Փամբակի տարածքում (Շիրակի նահանգ) ըստ ականատես -վերապրածների ընտանեկան հիշողությունների (1920-1921թթ.)* // ՑՀ հ.9(1): Երևան: ՀՑԹԻ: 2021: 83-122 էջեր:
8. **Հախոյան Վ.** *Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածներն Ալեքսանդրապոլի գավառում (1920-1921 թթ)* // Հայագիտության հարցեր: 3(24): Երևան: ԵՀ հրատ.: 2021: 72-84 էջեր:
9. **Հախոյան Վ.** *Կարսի հայության կոտորածը 1920-1921թթ.* // Հայագիտության հարցեր: 1(25): Երևան: ԵՀ հրատ.: 2022: 109-125 էջեր:
10. **Հախոյան Վ.** *Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Ղարաքիլիսայի գավառում (1920-1921 թթ.)* // Հայագիտության հարցեր: 2 (26): Երևան: ԵՀ հրատ.: 2022: 113-127 էջեր:
11. **Հարությունյան Վ.** *Նահատակաց հուշարձանի կառուցումը,Վազգեն Ա կաթողիկոս ամենայն հայոց, նվիրվում է մահվան 10-րդ տարելիցին* // Էջմիածին. Մայր աթոռ: Ս. Էջմիածին հրատ.: 2005: 40-51 էջեր:
12. **Հովհաննիսյան Ս.** *Պատմություն և հիշողություն (Ցեղասպանությունների աստիճանակարգման հիմնախնդիրն ըստ Պիեռ Նորայի)* // ՎԷՄ: Թիվ 1(41): Երևան: 2013: 12-33էջեր:
13. **Մարության Հ.** *Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման օրվա ձևավորումը, զարգացումները, մերօրյա վիճակը* // ՑՀ: 6(2): Երևան: ՀՑԹԻ: 2018: 103-142 էջեր:
14. **Մարության Հ.** *Հուշարձանը որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով)* // Հայ ժողովրդական մշակույթ XIII. Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, խմբ.՝ Դ. Վարդումյան, Ս. Հարությունյան, Ս. Հոբոսյան: Երևան: 2006: 172-1180 էջեր:
15. **Շագոյան Գ.** *‹‹Հիշողության լանդշաֆտը›› որպես պատմության դասավանդման հասկացություն և գործիք,* https://www.academia.edu/93154071/ (դիտվել է 02.14.2024):
16. **Պետրոսյան Հ.** *Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը:* Երևան: Փրինթինֆո: 2008: 406 էջ:
17. **Սաֆարյան Ա.** *Խորհրդային շրջանի աղբյուր-հուշարձանները և ժամանակակից խաչքարերի մշակույթի ծնունդը: //* Կայսերականի և հետկայսերականի միջև. հայաստանյան կրոնական լանդշաֆտի զարգացումները XX դարում: Երևան ԵՀ հրատ.: 2023: 124-140 էջեր:
18. **Halbwachs M.** *(1992). On collective memory (L. A. Coser, Ed. & Trans.).* University of Chicago Press. (Original work published 1925). 254p..
19. **Nora P.** *Between Memory and History: Les Lieux de Mémoire.– Representations* // Memory and Counter-Memory Spring. No. 26.1989. 7-22 pp. https://doi.org/10.2307/2928520 (դիտվել է 03.15.2025):
20. **Schwartz B.** *The Social Context of Commemoration: A Study in Collective Memory* // Social Forces. Vol 61 (2). Oxford University Press. 1982. 374-402 pp..
21. **Vansina J.** *Oral tradition as history.* University of Wisconsin Press. Madison. WI. United States. 1985. 222 p..
22. **Ассман А.** *Длинная тень прошлого:* Мемориальная культура и историческая политика: Новое литературное обозрение. Москва: 2014. 328 с..
23. **Бальян К.** *Мемориал Егерн*. Екатеринбург: Tatlin. 2015. 80 с..

24. **Харатян Г.** *Политика покорения памяти, или "приказано забыть": Превращение памяти в социальную и семейную "тайну" (На примере армянского геноцида),* // Устная история (Oral history) на постсоветском пространстве, (отв. ред. Щеглова Т.К.). Барнаул. 2017.126-154 сс..
25. **Шагоян Г. "***Национальное по содержанию и социалистическое по форме": Палимпсест мемориалов советской Армении* // Армянский гуманитарный вестник 9. Москва-Ереван. 2022. 122-144сс..

References

1. **Abrahamyan, D**. Field Materials. *[Dashtayin nyut'yer].* Yerevan, 2024. (in Armenian)
2. **Abrahamyan, L., Shagoyan, G**. "Between Historiography and Memory: Commemorating Soviet Armenia's Repressions.": *[Patmagrut'yan yev hushoghut'yan mijyew. Khorhrdayin Hayastani brnajnshumneri hushardzanac'umy].* In: Stalinist Repressions in Armenia.History, Memory, Everyday Life. Yerevan: NAS RA "Gitutyun", 2015, 238-283pp.. (in Armenian)
3. **Atanesyan, G.** "Soviet and Post-Soviet Monuments in Contemporary Armenian Discourse." *[Khorhrdayin yev hetkhorhrdayin hushardzann ardi hayastanyan diskursum].* (PhD thesis, YU Department of Cultural Studies, 2018), 206p.. (in Armenian)
4. **Bazeyan, K.** The Events of 1918–1921 in the Oral Memory of Shirak Residents: Collection of Materials. *[1918–1921 t't'. iroghut'yunneru Shirakts'ineri banavor hushoghut'yan mej. nyut'eri zhoghovatsu].* Gyumri: Shirak Center for Armenian Studies, NAS RA, 2023, 283 p. (in Armenia)
5. **Khanzadyan, M.** My Homeland Village – Lusaghbyur of Pambak. *[Im hayreni gyughy—P'ambaki Lusaghbyury].* Yerevan: Hrazdan Publishing, 2000, 272 p.. (in Armenian)
6. **Kharatyan, H.** "The Discourse of Nationalism and Targeting Genocide Memory in Political Repressions." *[Nats'ionalizmi diskursu yev tseghaspanut'yan hushoghut'yan t'irakhavorumu k'aghak'akan brnut'yunnerum].* In: Stalinist Repressions in Armenia: History, Memory, Everyday Life. Yerevan: NAS RA "Gitutyun", 2015, 102-118 pp.. (in Armenian)
7. **Hakhoyan, V.** "Massacres Committed by the Kemalists in the Pambak Region (Shirak Province) Based on Family Memories of Survivors (1920–1921)." *[K'emalakanneri irakanats'rats zangvatsayin kotorats'nery P'ambaki tarats'k'um (Shiraki nahang). ust akanates-veraprats'neri unt'anekan hushoghut'yunneri (1920–1921 t't'.)].* Journal of Genocide Studies, 9(1), Yerevan: AGMI, 2021, 83-122pp.. (in Armenian)
8. **Hakhoyan, V.** "Massacres Committed by the Kemalists in the Alexandropol Uyezd (1920–1921)." *[K'emalakanneri irakanats'rats zangvatsayin kotorats'nu Aleksandrapoli gavarum (1920–1921 t't'.)].* Issues of Armenology, 3(24), Yerevan: YSU Press, 2021, pp. 72–84. (in Armenian)
9. **Hakhoyan, V.** "The Massacre of the Armenians of Kars (1920–1921)." *[Karsi hayut'yan kotorats'y 1920–1921 t't'.].* Issues of Armenology, 1(25), Yerevan: YU Press, 2022, 109-125pp.. (in Armenian)
10. **Hakhoyan, V**. "Massacres Committed by the Kemalists in the Gharakilisa Uyezd (1920–1921)." *[K'emalakanneri irakanats'rats zangvatsayin kotorats'nery Gharak'ilisayi gavarum (1920–1921 t't'.)].* Issues of Armenology, 2(26), Yerevan: YU Press, 2022, 113-127pp.. (in Armenian)
11. **Harutyunyan, V.** "The Construction of the Monument to the Martyrs: *[Nahatakats' hushardzani karuts'umu].* Dedicated to the 10th Anniversary of the Death of Catholicos Vazgen I." Etchmiadzin, Mother See of Holy Etchmiadzin, 2005, 40-51 pp.. (in Armenian)
12. **Hovhannisyan, S.** "History and Memory: The Problem of Genocide Gradation According to Pierre Nora." *[Patmut'yun yev hushoghut'yun (Tseghaspanut'yunneri astichanakarghman himnakhndirn ust Pierr Norai)].* VEM Journal, 1(41), Yerevan, 2013, 12-33pp.. (in Armenian)
13. **Marutyan, H.** "The Formation, Development and Current State of the Day of Remembrance of the Armenian Genocide Victims." *[Hayots' tseghaspanut'yan zoheri hushatakman orva dzewavorumu, zargats'umneru, merorya vichaky].* Journal of Genocide Studies, 6(2), Yerevan: AGMI, 2018, 103-142pp.. (in Armenian)
14. **Marutyan, H.** "The Monument as a Cemetery (Based on the Example of the Armenian Genocide Memorial Complex)." *[Hushardzanu vorpes gerezmanots' (Tseghaspanut'yan hushahamaliri orinakov)].* In: Armenian Folk Culture XIII: Materials of the Republican Scientific Session, eds. D. Vardumyan, S. Harutyunyan, S. Hobosyan. Yerevan, 2006, 172-180pp.. (in Armenian)

15. **Shagoyan, G.** “The ‘Memory Landscape’ as a Concept and Tool for Teaching History.” *[.Hushoghut’yan landshaftեն vorpes patmut’yan dasavandman haskats’ut’yun yev gorts’ik’].* https://www.academia.edu/93154071/ (accessed 14.02.2024). (in Armenian)
16. **Petrosyan, H.** Khachkar: Origin, Function, Iconography, Semantics. *[Khach’k’ar: tsagumu, gorts’arruyt’yu, patkeragrut’yunu, imastabanut’yunu].* Yerevan: Printinfo, 2008, 406 p.. (in Armenian)
17. **Safaryan, A.** “Soviet Source-Monuments and the Emergence of the Contemporary Culture of Khachkars.” *[Khorhrdayin shrjani aghbyur-hushardzannu yev zhamanakakits’ khach’k’areri mshakut’ayin ts’nundy].* In: Between the Imperial and the Post-Imperial: Developments in the Religious Landscape of Armenia in the 20th Century. Yerevan: YSU Press, 2023, 124-140pp.. (in Armenian)
18. – 21. in Inglish

22 **Assmann, A.** The Long Shadow of the Past: Memorial Culture and Historical Politics. *[Dlinnaya ten’ proshlogo: Memorial’naya kul’tura i istoricheskaya politika].* Moscow: New Literary Review, 2014, 328 p.. (in Russian)

23 **Balyan, K.** Memorial Yegern. *[Memorial Egurn].* Yekaterinburg: Tatlin, 2015, 80 p.. (in Russian)

24 **Kharatyan, G.** “The Politics of Memory Conquest, or ‘Ordered to Forget’: Transforming Memory into a Social and Family ‘Secret’ (The Case of the Armenian Genocide).”*[Politika pokoreniya pamyati, ili .prikazano zabyt’ե: Prevrashchenie pamyati v sotsial’nuyu i semeynuyu .taynuե (Na primere armyanskogo genotsida)].* In: Oral History in the Post-Soviet Space, ed. T. K. Shcheglova. Barnaul, 2017, 126-154pp.. (in Russian)

25 **Shagoyan, G.** ‘National in Content and Socialist in Form’: The Palimpsest of Memorials in Soviet Armenia.” *[.Natsional’noe po soderzhaniyu i sotsialisticheskoe po forme’: Palimpsest memorialov sovetskoy Armenii].* Armenian Humanitarian Bulletin, 9, Moscow–Yerevan, 2022, 122-144pp.. (in Russian)

Ընդունվել է / Received on: **25. 10. 2026**
Գրախոսվել է / Reviewed on: **03. 03. 2026**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: 15**. 05. 2026**

Տեղեկություններ հեղինակի մասին

Դիանա Վարուժանի ԱԲՐԱՀԱՄՅԱՆ՝ ԵՊՀ մագիստրոս /մշակութաբան/, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ dianaabrahamyan.researcher@gmail.com, https://orcid.org/0009-0008-1556-6505

Diana Varuzhan ABRAHAMYAN: Master’s degree of Cultural Studies, YSU, Yerevan, RA,
e-mail:dianaabrahamyan.researcher@gmail.com, https://orcid.org/0009-0008-1556-6505